ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԱՄ-2019/25, 21.02.2019թ.

Բողոք ներկայացնող անձ՝ «Հերմո Ֆարմ» ՍՊԸ

Պատվիրատու՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝ «ՍԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-18/54» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի կարիքների համար պետական պատվերով ստենտավորման ծառայությունների ձեռքբերում:

Բողոքի պահանջը՝

«ՍԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-18/54» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին արգելել կատարել որոշակի գործողություններ, ընդունել որոշումներ, կնքել պայմանագիր և պարտավորեցնել պատվիրատուին չկայացած հայտարարել «ՍԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-18/54» ծածկագրով էլեկտրոնային աճուրդը:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Մ. ԱՆԱՆՅԱՆ, ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԾԱՏՈՒՐՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Սույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը ներառյալ:

Գնումների հետ կապված բողոքներ բննող անձին

Հասցե՝ Մելիք Ադամյան 1, Երեւան քաղ.

Բողոք բերող անձ՝ «Հերմո Ֆարմ» ՍՊ ընկերություն

տնօրեն՝ Հովհաննես Հլոյան

Հասցե՝ 1 բն., Հաղթանակի 42 ա, Գյումրի քաղ.

Հեռ.093000490, էլ. փոստ hloyanh@mail.ru

Պատվիրատու՝ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ՓԲԸ

Հասցե՝ Գյուրջյան 10, Երեւան քաղ.

Էլեկտրոնային աճուրդի ծածկագիր՝ ՍԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-18/54,

ստենտավորման ծառայությունների մատուցման

նպատակով ձեռք բերվող ապրանքներ

Բ Ո Ղ Ո Ք

1. Վեճի առարկա.

1.1 Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ՓԲ ընկերության կողմից հայտարարվել է ՍԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-18/54 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ:

1.2 ՍԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-18/54 ծածկագրով հրավերը հրապարակվել է 14.01.2019թ:

1.3 Հետադարձ աճուրդը կայացել է 24.01.2019թ.:

1.4 24.01.2019թ. մինչ սույն բողոքը ներկայացնելու օրը պատվիրատուի կողմից արձանագրությունը հասանելի չի դարձվել (հրապարակվել) ցանկացած անձի համար, ինչպես սահմանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքը:

1.5 05 փետրվարի 2019թ դիմում է ներկայացվել պատվիրատուին օրենքով սահմանված կարգով ՍԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-18/54 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի արձանագրության եւ դրա մաս կազմող փաստաթղթերի պատճենները տրամադրելու մասին:

1.6 Բողոքը ներկայացնելու օրվա դրությամբ պատվիրատուն չի տրամադրել պահանջվող փաստաթղթերը կամ մերժել ներկայացված դիմում (դրսեւորել է անգործություն):

7423-18
21.02.2019

2.Բողոքի փաստական եւ իրավական հիմքերը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն Օրենքի նպատակն է ի թիվս այլի «գնումների եւ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ եւ օգտավետ իրականացումը:»

Համաձայն Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի «Գնումների գործընթացը հիմնվում է հետեւյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային եւ ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում եւ նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն»:

Համաձայն ՍԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-18/54 ծածկագրով հրավերի 7.9 կետի՝ «դիմում-հայտարարությունների գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված մինչև հինգ աշխատանքային օրվա ընթացքում»:

Կառավարության թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 22-րդ ենթակետի համաձայն՝ «հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված մինչեւ հինգ, իսկ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի ներկայացրած փաստաթղթերի գնահատումը՝ դրանք ներկայացվելու օրվանից հաշված մինչեւ տասն աշխատանքային օրվա ընթացքում»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ «Պատվիրատուն պարտավոր է գնման ընթացակարգի արձանագրության կամ դրա մաս կազմող փաստաթղթի պատճենը, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, տրամադրել ցանկացած անձի՝ վերջինիս կողմից նման պահանջ ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում»:

24.01.2019թ տեղի է ունեցել ՍԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-18/54 ծածկագրով հետադարձ աճուրդ եւ մինչ սույն բողոքը ներկայացնելու օրվա դրությամբ պատվիրատուն չի հրապարակել աճուրդի արձանագրությունը:

05 փետրվարի 2019թ դիմում է ներկայացվել պատվիրատուին օրենքով սահմանված կարգով ՍԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-18/54 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի արձանագրության եւ դրա մաս կազմող փաստաթղթերի պատճենները տրամադրելու մասին (կից՝ դիմումի պատճեն եւ պատվիրատուի կողմից ստանալը հավաստող ապացույցը):

Պատվիրատուն չի տրամադրել կամ մերժել պահանջվող փաստաթղթերի պատճենները (դրսեւորել է անգործություն):

Այսպիսով, պատվիրատուի կողմից չի պահպանվել հայտերի գնահատման եւ բձանագրության հրապարակման համար սահմանված ժամկետները եւ ընթացակարգը:

Հրավերի 11-րդ գլուխը կարգավորում է գնման գործընթացի հետ կապված գործողությունները եւ (կամ) ընդունված որոշումները բողոքարկելու մասնակցի իրավունքը եւ կարգը:

Համաձայն հրավերի 11.3 կետի՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի Օրենքի համաձայն՝ նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի եւ հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) եւ որոշումները:

Թեեւ սույն բողոքի առարկան պատվիրատուի գործողություններն (անգործությունը) են, բայց այնուամենայնիվ հարկ ենք համարում անդրադառնալ հրավերին, մասնավորապես տեխնիկական բնութագրերին, փաստարկելով այն հանգամանքը, որ պատվիրատուի կողմից ՍԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-18/54 ծածկագրով էլեկտրոնային աճուրդն իրականացվել է օրենքի կոպտագույն խախտումներով եւ դեռևս դրանք շարունակվում են:

Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ «Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առեւտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը»:

Ուսումնասիրելով ՍԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-18/54 ծածկագրով հրավերը տեխնիկական բնութագրում չենք կարող արձանագրել, որ պատվիրատուն ղեկավարվել է Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի իմպերատիվ պահանջով, քանի որ նրանում բացակայում է «կամ համարժեք» եզրույթը: Պատվիրատուի կողմից օրենքով չառաջնորդվելու արդյունքում խախտվել է ինչպես այլ հավանական հայտատուների, այդ թվում նաեւ «Հերմո Ֆարմ» ՍՊ ընկերության էլեկտրոնային աճուրդին մասնակցելու իրավունքը:

04 մայիսի 2017թ 526-Ն կառավարության որոշման 22-րդ կետը սահմանում է, որ «Գնման առարկայի բնութագրերը եւ մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ՝ բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված պայմաններով գնում կատարելու դեպքերի»:

Օրենքով սահմանված կարգավորմաբ չկազմված հրավերով կայացված էլեկտրոնային աճուրդը չի կարող ապահովել օրինական արդյունք, քանի որ իսկզբանե կարծես թե պատվիրատուն միտում է ունեցել քողարկված միջոցով սահմանափակել շատ այլ մասնակիցների հայտ ներկայացնելու հնարավորությունը, այդպիսով՝ հնարավորություն ստեղծել նախընտրելի մասնակցի հաղթանակը:

Պատվիրատուի նմանօրինակ միտումը հիմնավորվում է նրանով, որ մինչ այժմ պատվիրատուն չի հրապարակել 24.01.2019թ հետադարձ աճուրդի արձանագրությունը եւ այն մեր դիմում-պահանջի հիման վրա եւս չի տրամադրվել:

Այսպիսով, արձանագրում ենք պատվիրատուի բազմաթիվ օրենսդրորեն ամրագրված կարգավորումների շրջանցումները, որը չի կարող դիտարկվել ուղակի վրիպումներ կամ անհետեւողական վերաբերմունք: Նման վերաբերմունքը պետական միջոցներից ֆինանսավորվող գործընթացին շատ ավելի ռիսկային նախադրյալներ են պարունակում:

Իրավական նորմերի խախտմամբ իրականացվող գնման ընթացակարգը չի կարող ապահովել օրինական եզրափակում, որը նախատեսել է օրենսդիրը՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով եւ դրանց իրականացման համար ընդունված իրավական այլ ակտերով (ՀՀ կառավարության որոշումներ):

3. Պահանջ.

3.1. Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի՝ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ՓԲ ընկերությանը ՍԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-18/54 ծածկագրի հրավերով արգելել կատարել որոշակի գործողություններ, ընդունել որոշումներ, կնքել պայմանագիր եւ պարտավորեցնել պատվիրատուին չկայացած համարելու ՍԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-18/54 ծածկագրով գնման ընթացակարգը:

3.2 Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բողոքը բավարարվելու դեպքում վերադարձնել բողոքի քննության համար նախատեսված վճարը:

Կից ներկայացվում են.

1. Անձը հաստատող փաստաթղթի պատճեն,

2. բողոք ներկայացնելու համար վճարման անդորրագրի պատճեն,

3. հրավերի հրապարակման եւ հետադարձ աճուրդի օրերը հավաստող տեղեկության պատճենը,

4. պատվիրատուին հասցեագրված 05.02.2019թ դիմումի պատճեն եւ այն ստանալու փաստը հավաստող ապացույցը:

«Հերմո Ֆարմ» ՍՊ ընկերության

Տնօրեն Հովհաննես Հլոյան

20 փետրվարի, 2019թ